

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՎԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆ

Տ Ն Տ Ե Ս Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՓԱԹԵԹ

(հեռակա ուսուցման ուսանողների համար)

Ե Ր Ե Վ Ա Ն 2006

Կազմողներ՝ Մ. Աղայան
Գ. Գրիգորյան

Տնտեսագիտություն: Մեթոդական ցուցումների փաթեթ: -Երևան, 3ՊՃՀ,
2006, 32 էջ:

Մեթոդական ցուցումների փաթեթը ընդգրկում է տնտեսագիտության դասընթացի ծրագրային մի քանի թեմաներ և տեստեր, որոնք կարող են օգտակար լինել հեռակա ուսուցման ուսանողների գիտելիքների ստուգումների և նյութի պատկերավոր ըմբռնման համար

Մասն. խմբագիր՝ Ռ.Սարինյան
Խմբագիր՝ Ն. Խաչատրյան

ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՄԵԹՈՂԸ

1. 1. *Տնտեսագիտության առարկայի սահմանումը:*
1. 2. *Տնտեսագիտության վերլուծության մեթոդները: Մակրոտնտեսագիտություն և միկրոտնտեսագիտություն: Տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական նպատակներ: Պոզիտիվ և նորմատիվ տնտեսագիտություն:*
- 1.3. *Տնտեսական մտածողություն. ոչ ճիշտ պատկերացումներ և խոչընդոտներ:*
1. 4. *Գրաֆիկները և դրանց նշանակությունը:*

ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ: ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԸ

2. 1. *Տնտեսագիտության հիմքը. պահանջումըներն անսահման են, ռեսուրսները սահմանափակ: Ռեսուրսների կատեգորիաները:*
2. 2. *Տնտեսագիտությունը և արդյունավետությունը: Լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ:*
- 2.3. *Հասարակության արտադրական հնարավորությունների սահմանը: Ծախքերի աճի օրենքը:*
2. 4. *Չզբաղված ռեսուրսներ. տնտեսական աճը և ապագան: Ներկայիս այլընտրանքները և ապագա հնարավորությունները:*
2. 5. *Տնտեսական համակարգերի մոդելները:*

ԳԼՈՒԽ 3. ՇՈՒԿԱ : ՊԱՀԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ

3. 1. *Շուկայի բնորոշումը և հիմնական տեսակները:*
3. 2. *Պահանջարկ: Պահանջարկի օրենքը և կորը: Պահանջարկի ոչ գնային դետերմինանտները:*
3. 3. *Առաջարկ: Առաջարկի օրենքը և կորը: Առաջարկի ոչ գնային դետերմինանտները:*
3. 4. *Շուկայական հավասարակշռվածություն: Գների հավասարակշռող ֆունկցիան:*
3. 5. *Էլաստիկությունը և շուկայի ադապտացիայի պրոցեսը:*
3. 6. *Շուկայական համակարգի կողմ և դեմ փաստարկները:*

ԳԼՈՒԽ 4. ՄԱԿՐՈՏԵՍԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

4. 1. Մակրոտնտեսական ցուցանիշների դերը:
4. 2. Համախառն ազգային արդյունք. ընդհանուր բնութագիրը:
4. 3. Համախառն ազգային արդյունքի հաշվարկման եղանակները:
4. 4. Մակրոտնտեսական այլ ցուցանիշներ. զուտ ազգային արդյունք, ազգային եկամուտ, անձնական եկամուտ:
4. 5. Գների մակարդակի որոշումը:
4. 6. Անվանական և իրական համախառն ազգային արդյունք: Ինֆլյավորում և դեֆլյավորում:
4. 7. Համախառն ազգային արդյունքը և տնտեսական բարեկեցությունը:

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

5. 1. Գործազրկությունը և նրա ձևերը:
5. 2. Գործազրկության բնական մակարդակը:
5. 3. Նվազագույն աշխատավարձ, արհմիություններ, էֆեկտիվ աշխատավարձ և գործազրկություն կապը:
5. 4. Գործազրկության տնտեսական և սոցիալական ծախսերը:

ԳԼՈՒԽ 6. ԻՆՖԼԱՅԱՑԻԱ : ՊԱՏՃԱՌՆԵՐԸ և ԾԱԽՔԵՐԸ

6. 1. Ինֆլյացիայի պատճառները և ձևերը:
6. 2. Ինֆլյացիայի ազդեցությունը եկամուտների վերաբաշխման և ազգային արտադրության ծավալների վրա:
6. 3. Ընտրություն գործազրկության և ինֆլյացիայի միջև. Օլբան Ֆիլիպսի կորը:

ԳԼՈՒԽ 7. ՓՈՂԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԸ: ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ :

7. 1. Փողի էությունը, ֆունկցիաները, տեսակները:
7. 2. Փողի առաջարկը և պահանջարկը: Փողի քանակային տեսությունը:

7. 3. *Բանկերը և դրանց գործառնությունները:*

7. 4. *Բանկային համակարգի վարկային պոտենցիալը և դրամական մուլտիպլիկատորը:*

7. 5. *Դրամավարկային քաղաքականության հիմնական լծակները:*

ԳԼՈՒԽ 8 . ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ: ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

8. 1. *Պետական բյուջե. կառուցվածքը և կարգավորումը.*

- *ընդհանուր բնութագիրը,*
- *բյուջեի եկամտային մասի աղբյուրները: Հարկի էությունը, տեսակները: Հարկավորման սկզբունքները,*
- *բյուջեի ծախսային մասի ուղղությունները,*
- *Լաֆֆերի կորը: Տեսակետներ բյուջեի կարգավորման վերաբերյալ:*

8. 2. *Պետական պարտքը և նրա տնտեսական հետևանքները:*

ԳԼՈՒԽ 9. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

9. 1. *Միջազգային առևտրի դերը, տնտեսական հիմքերը: Մասնագիտացում, բացարձակ և հարաբերական առավելություններ: Հեկշեր-Օլինի տեսությունը և « Լեոնտևի պարադոքսը »:*

9. 2. *Միջազգային առևտրի պետական կարգավորիչները:*

9. 3. *Արժուքային հիմնախնդիրներ: Վճարային հաշվեկշիռ:*

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԸ

Տնտեսագիտությունն ուսումնասիրում է սահմանափակ արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման հիմնահարցերը կամ դրանցով կառավարումը՝ մարդկանց նյութական պահանջումների առավելագույն բավարարմանը հասնելու նպատակով:

Տնտեսական պահվածքի վերլուծության երկու աստիճանները. մակրոտնտեսագիտություն և միկրոտնտեսագիտություն: Մակրոտնտեսության հարթությունը վերաբերում է կամ տնտեսությանն ամբողջությամբ, կամ նրա հիմնական ստորաբաժանումների ու ագրեգացված օբյեկտների այնպիսի հիմնական բաղկացուցիչներին, ինչպիսիք են՝ պետական ոլորտը, տնային տնտեսությունները և մասնավոր ոլորտը: Մակրոտնտեսագիտության մեջ տարբեր տնտեսական հարցերի վերլուծության ժամանակ օգտագործվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ արդյունքի ամբողջական ծավալը, զբաղվածության ընդհանուր մակարդակը, ամբողջական եկամուտը, ամբողջական ծախսերը, զմերի ընդհանուր մակարդակը և այլն: Միկրոտնտեսագիտությունը գործ ունի կոնկրետ տնտեսական միավորների, առանձին տնտեսական սուբյեկտների ուսումնասիրության հետ: Այստեղ մենք օգտվում ենք՝ «առանձին ճյուղ», «ֆիրմա» կամ «տնային տնտեսություն» հասկացություններից և ուշադրության ենք արժանացնում այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ կոնկրետ արդյունքի արտադրությունը կամ գինը, մեկ ֆիրմայում զբաղված բանվորների թիվը, առանձին ֆիրմայի կամ առանձին ընտանիքի եկամուտը կամ ծախսերը, այն ուղիներն ու լծակները, որոնցով կարելի է կարգավորել տնտեսական հավասարակշռվածությունն այդ հարթության մակարդակով: Պատկերավոր ասած՝ մակրոտնտեսագիտությունն ուսումնասիրում է անտառը, միկրոտնտեսագիտությունը՝ նրա առանձին մի ծառը:

Տնտեսագիտության վերլուծության մեթոդներն են ինդուկցիան և դեդուկցիան: Ինդուկցիայի մեթոդը թույլ է տալիս մասնավոր դիտողություններից ու փորձերից կատարել եզրակացություններ, մի շարք այդպիսի եզրակացություններից անել ավելի ընդհանուր բնույթի եզրահանգումներ: Դեդուկցիան ենթադրում է հակառակ շարժումը՝ ընդհա-

նուրից դեպի մասնավորը, տեսությունից դեպի փաստեր: Տնտեսագիտական ընդհանրացումների ժամանակ հաճախ օգտագործվում է «այլ հավասար պայմաններում» ենթադրությունը: Տնտեսագիտության տեսությունը մոդել է, տնտեսության այս կամ այն ոլորտի պարզեցված պատկերը կամ սխեման: Նրանում անտեսվում են իրական կյանքին բնորոշ շեղումների մանրամասները (այսինքն կատարում ենք վերացարկում կամ արստրակցիա):

Տնտեսական քաղաքականության հիմնավորումը, պոզիտիվ և նորմատիվ տնտեսագիտություն (ինչ կա և ինչ պետք է լինի): Տնտեսական նպատակներ. տնտեսական աճ, լրիվ զբաղվածություն, տնտեսական արդյունավետություն, զների կայուն մակարդակ, տնտեսական ազատություն, եկամուտների արդարացի բաշխում, տնտեսական ապահովվածություն, առևտրական հաշվեկշիռ: Տնտեսական նպատակների իրականացման հակասականությունը: Տնտեսական քաղաքականության մշակումը և հիմնական փուլերը. նպատակների հստակ որոշարկում, այլընտրանքային ծրագրերի հնարավոր հետևանքների հաշվառում, նույնատիպ ծրագրերի իրականացման նախկին փորձի ուսումնասիրում և դրանց արդյունավետության գնահատում:

Ռացիոնալ տնտեսական մտածողության խոչընդոտներ. տրամաբանական սխալ կառույցներ.« այն, ինչ ճշմարիտ է անհատի կամ խմբի մի մասի համար, անպայմանորեն ճշմարիտ է նաև խմբի և ամբողջի համար», «որքանով A երևույթը նախորդում է B երևույթին՝ A - ն հանդիսանում է B - ի պատճառը»: Կոռեկցիա:

Գրաֆիկները և դրանց նշանակությունը. Գրաֆիկը երկու փոփոխականների միջև կախվածության պատկերավոր արտահայտությունն է: Այն հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել տնտեսական կապերի մասին, որոնք կարող են լինել դրական կամ ուղիղ և բացասական կամ հակադարձ: Դրական կամ ուղիղ կապ ասելով հասկանում ենք, որ երկու փոփոխականները, օրինակ՝ եկամուտը և սպառումը, փոփոխվում են միևնույն ուղղությամբ: Տվյալ դեպքում կապը գրաֆիկորեն արտահայտվում է վերընթաց գծի տեսքով:

Տվյալների երկու շարքերի միջև կապը կարող է լինել նաև հակադարձ կախվածության ձևով, որն արտահայտվում է վարընթաց գծի տեսքով Պարզ գրաֆիկները արտահայտում են երկու փոփոխականների կապը

և անտեսում են բազմաթիվ այլ գործոնների ազդեցությունը, որն իր հիմքում ունի «այլ հավասար պայմաններում» ենթադրությունը:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ: ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԿԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԸ:

Տնտեսագիտության հիմքը. անսահման պահանջումները և սահմանափակ ռեսուրսները: *Պահանջումները* որևէ ապրանք կամ ծառայություն ձեռք բերելու սպառողների ցանկությունն է: Պահանջումների համակարգը. անհատական պահանջումներ(ֆիզիկական, սոցիալական, ինտելեկտուալ), նյութական պահանջումներն ըստ կարևորության (առաջին անհրաժեշտություն և ճոխություն), պահանջումները՝ կապված քանակական որոշակիության և դրանց բավարարման հնարավորությունների հետ (բացարձակ, իրական, վճարունակ, բավարարված), պահանջումներն ըստ ֆունկցիոնալ բնույթի՝ անձնական, արտադրական, անհատական և հասարակական: Պահանջումների պատմականությունն ու զարգացումը:

Տնտեսական ռեսուրսներ ասելով հասկանում ենք բնական, մարդկային և մարդու կողմից արտադրված այն ամենը, ինչն օգտագործվում է ապրանքներ և ծառայություններ արտադրելու համար: Տնտեսական ռեսուրսների դասակարգումը. *նյութական* (հող,կապիտալ) և *մարդկային* (աշխատանք և ձեռնարկատիրական ունակություն): *Հող* հասկացության տակ տնտեսագետները նկատի ունեն բոլոր այն բնական ռեսուրսները, բնության բարիքները, որոնք կիրառելի են արտադրության պրոցեսում, ինչպիսիք են՝ վարելահողերը, անտառները, հանքային հանածոները, ջրային ռեսուրսները և այլն:


Կապիտալ կամ «*ինվեստիցիոն ռեսուրսներ*» հասկացությունն ընդգրկում է արտադրության բոլոր միջոցները, այսինքն՝ գործիքների, մեքենաների, սարքավորումների բոլոր տեսակները, ֆաբրիկագործարանային, պահեստային և տրանսպորտային միջոցները և իրացման ցանցը, որոնք օգտագործվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության և դրանք վերջնական սպառողին հասցնելու համար:

Աշխատանքը լայն հասկացություն է, որն օգտագործվում է մարդկանց բոլոր այն ֆիզիկական ու մտավոր ունակությունները բնութագրելու համար, որոնք կիրառվում են ապրանքների և ծառայությունների արտադրության պրոցեսում: *Ձեռնարկատիրական ունակությունը* հատուկ մարդկային ռեսուրս է, որը ցույց է տալիս ապրանքների արտադրության պրոցեսում ռեսուրսների լավագույն օգտագործման, որոշումներ կայացնելու, նորույթներ ստեղծելու և կիրառելու, ռիսկի դիմելու մարդու ունակությունը:

Վճար տնտեսական ռեսուրսների դիմաց. ռենտա, տոկոս, աշխատավարձ, շահույթ:

Տնտեսագիտությունը և արդյունավետությունը. « ծախքեր-թողարկում» կապը: Ռեսուրսների լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ (բոլոր պիտանի ռեսուրսների օգտագործում և արդյունավետ բաշխում):

Արտադրական հնարավորությունների աղյուսակը և կորը պարզեցնող ենթադրությունները. ռեսուրսների լրիվ զբաղվածություն և արտադրության լրիվ ծավալ, ռեսուրսների հաստատուն քանակ, անփոփոխ տեխնոլոգիա, երկու արդյունքի արտադրություն: Ընտրության անհրաժեշտությունը: Արտադրական հնարավորությունների աղյուսակի և կորի կառուցումը:




Կորի վրա գտնվող կետերի տնտեսական բովանդակությունը: Արտադրանքի օպտիմալ կառուցվածքը. դրա քանակական և նորմատիվային բնույթը: «Շատ և այժմ» քաղաքականության տարբերությունը «ավելի շատ, բայց հետո» քաղաքականությունից: Լրացուցիչ ծախսերի աճի տնտեսական օրենքը: Այն հիմնավորող փաստարկները. ռեսուրսները պիտանի չեն այլընտրանքային արդյունքների արտադրության մեջ լրիվ օգտագործման համար, կատարյալ էլաստիկության և փոխադարձ փոխարինելիության բացակայությունը, տեղափոխման ընթացքում կրճատվում է ընտրության հնարավորությունը:

Տնտեսական համակարգեր. զուտ կապիտալիզմ, հրամանատարական էկոնոմիկա, խառը համակարգեր, տրադիցիոն էկոնոմիկա: Տարբերիչ հատկանիշներ, ինստիտուցիոնալ և կոորդինացնող մեխանիզմներ:

ՇՈՒԿԱ: ՊԱՅԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ

Շուկան այնպիսի հաստատություն է, մեխանիզմ, շնորհիվ որի ապրանքների և ծառայությունների գնորդները (պահանջարկ ներկայացնողները) և վաճառողները (առաջարկ ներկայացնողները) միմյանց հետ մտնում են կապի մեջ: Շուկայի տեսակները. ըստ տարածական սահմանների և ընդգրկումների՝ տեղական, ազգային և միջազգային շուկաներ, ըստ շուկայում վաճառվող ապրանքների կամ օբյեկտների՝ արտադրության միջոցների կամ ինվեստիցիոն ապրանքների ,անձնական սպառման ապրանքների , ծառայությունների ,աշխատուժի, արժեթղթերի կամ ֆոնդային բորսա, տարադրամի, ինֆորմացիոն, լիցենզիաների և արտոնագրերի (պատենտների) շուկաներ, ըստ առևտրի ձևերի. մեծածախ (կատարվում է արտադրողների և առևտրականների միջև մեծ ծավալներով, որի դեպքում արտադրանքը մնում է շրջանառության կամ արտադրության ոլորտում և չի հասնում վերջնական սպառողներին) և մանրածախ (առևտուրը կատարվում է մի կողմից արտադրողի կամ առևտրականի, իսկ մյուս կողմից՝ անմիջական սպառողների միջև, որի դեպքում արդյունքը դուրս է գալիս շրջանառության ոլորտից և ենթարկվում վերջնական սպառման):

Պահանջարկը տվյալ արդյունքի այն քանակությունն է, որը գնորդները կգնեն տարբեր հնարավոր գներով: Պահանջարկի և պահանջմունքի տարբերությունը: Գնի և պահանջարկի մեծության հակադարձ կախվածությունը: Պահանջարկի օրենքը հիմնավորող փաստարկները. ա) պարզ տրամաբանությամբ. սպառողներն ավելի շատ արդյունքներ գնում են ցածր, քան բարձր գներով, բ) սպառումը ենթակա է նվազող սահմանային օգտակարության սկզբունքին, գ) գործում են եկամտի և փոխարինելիության էֆեկտները: Պահանջարկի կորը. արդյունքի գնի և պահանջարկի մեծության միջև հակադարձ կապը կարելի է արտահայտել գրաֆիկի տեսքով, որտեղ ուղղահայաց (օրդինատ) առանցքը արտահայտում է միավոր արդյունքի փոփոխվող գները («P» price՝ գին), իսկ հորիզոնական (աբսցիս) առանցքը՝ պահանջարկի («D», demand՝ պահանջարկ) փոփոխվող մեծություններն այդ գների պայմաններում.




Գնի և պահանջարկի մեծության ֆունկցիոնալ կապը կարելի է արտահայտել բանաձևի միջոցով՝ $D=f(1/p)$:

Պահանջարկի ոչ գնային դետերմինանտները. սպառողների ճաշակները և նախասիրությունները, գնորդների թիվը, գնորդների եկամուտների փոփոխությունը, փոխարինող և լրացնող ապրանքների գները, սպառողների սպասելիքները, լրացուցիչ ծախսերը:

«Պահանջարկի փոփոխություն» և «պահանջարկի մեծության փոփոխություն» հասկացությունների տարբերությունը. ոչ գնային դետերմինանտների փոփոխության հետ փոխվում է պահանջարկը, ամբողջ

կորը տեղաշարժելով կամ աջ՝ կամ ձախ, իսկ գնի ամեն մի փոփոխություն, այլ հավասար պայմաններում, ենթադրում է պահանջարկի մեծության փոփոխություն, որը կորի նույն դիրքի պայմաններում դրսևորում է տեղաշարժ նրա երկայնքով՝ *a*-ից մինչև *d* և հակառակը:

Առաջարկը ապրանքների և ծառայությունների այն քանակությունն է, որն արտադրողները (վաճառողները) ցանկանում են և կարող են արտադրել և առաջարկել վաճառքի որոշակի ժամանակամիջոցում՝ հնարավոր գներից յուրաքանչյուրի դեպքում: Առաջարկի մեծություն և արտադրության ծավալ: Առաջարկի օրենքը. ապրանքի գնի և առաջարկի մեծության («S», supply՝ առաջարկ) միջև գործում է ուղիղ համեմատական կախվածություն: Վերջինս կարելի է արտահայտել գրաֆիկորեն, որպես ձախից աջ բարձրացող վերընթաց կոր:



Առաջարկի մեծության ուղիղ համեմատական կախվածությունը գների մակարդակից արտահայտվում է $S=f(p)$ բանաձևով:

Առաջարկի ոչ գնային դետերմինանտները. ռեսուրսների գները, տեխնոլոգիան, հարկերը և դոտացիաները, այլ ապրանքների գները, արտադրողների ապագա սպասելիքները, վաճառողների թիվը շուկայում : « Առաջարկի փոփոխություն» և «առաջարկի մեծության փոփոխություն» հասկացությունների տարբերությունը:

Պահանջարկի և առաջարկի գնային էլաստիկությունը. էլաստիկությունը նշանակում է գնի փոփոխության նկատմամբ մարդկանց ռեակցիայի ինտենսիվությունը: Բացարձակ ոչ էլաստիկ պահանջարկ և

առաջարկ: Շուկայական հավասարակշռություն: Հավասարակշռված գին և արտադրանքի հավասարակշռված քանակ: Առաջարկի ավելցուկ, պահանջարկի նվազում, գների մրցակցային իջեցում վաճառողների կողմից: Առաջարկի պակասորդ, պահանջարկի աճ, գների բարձրացում, արտադրանքի ավելացում: Գների հավասարակշռող ֆունկցիան:

Պահանջարկի և առաջարկի փոփոխությունները և դրանց ազդեցությունը գների ու արդյունքների քանակի վրա: Շուկայական համակարգի դերի գնահատումը. կողմ փաստարկները(ռեսուրսների արդյունավետ բաշխում,ստեղծում է խթաններ տնտեսական գործունեության բոլոր ոլորտների, հատկապես արտադրության վրա ունեցած ազդեցության շնորհիվ, գիտության և տեխնիկայի նվաճումների լայնորեն օգտագործում, ռեսուրսների արդյունավետ օգտագործում, նոր, այլընտրանքային ռեսուրսների կիրառության խթանում),դեմ փաստարկները (մրցակցության թուլացում, վատնողական և ոչ արդյունավետ արտադրություն, եկամտի և հարստության անհավասարաչափ բաշխում, ոչ լրիվ զբաղվածություն և գների ոչ կայուն մակարդակ, կոլեկտիվ պահանջումները հաշվի առնելու անընդունակություն):

ՄԱԿՐՈՏԵՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Մակրոտնտեսական ցուցանիշների դերը: Համախառն ազգային արդյունքը (ՀԱԱ) որոշակի ժամանակամիջոցում, սովորաբար մեկ տարվա ընթացքում, ստեղծված բոլոր ապրանքների և ծառայությունների վերջնական արտադրության շուկայական արժեքն է: Դրամական չափակցումը: Վերջնական արդյունքներ: Միջանկյալ արդյունքների բացառում: Ավելացված արժեք: Ոչ արտադրողական գործարքների բացառումը. ֆինանսական գործարքներ(պետական և մասնավոր տրանսֆերտային վճարումներ, արժեթղթերի գործարքներ) և ապրանքների վերավաճառք:

ՀԱԱ-ի հաշվարկման երկու եղանակները. ըստ ծախսերի և ըստ եկամուտների: Ըստ ծախսերի հաշվարկման տարրերը. տնային տնտեսությունների անձնական սպառողական ծախսեր(ծախսեր երկարատև օգտագործման ապրանքներ,կարճատև կամ ընթացիկ օգտագործման

ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու համար), բիզնեսի ինվեստիցիոն ծախսեր, ապրանքների պետական գնումները, արտասահմանյան քաղաքացիների գնումներ կամ զուտ արտահանում: «Ինվեստիցիոն ծախսեր» հասկացությունը և բաղկացուցիչ տարրերը. ձեռնարկատերերի կողմից մեքենաների, սարքավորումների և հաստոցների վերջնական գնումներ, ամբողջ շինարարությունը և պաշարների փոփոխությունը: Ոչ ինվեստիցիոն գործարքներ. արժեթղթերի առք ու վաճառք, առկա ակտիվների վերավաճառք: Համախառն և զուտ ինվեստիցիաներ: Չուտ ինվեստիցիաները և տնտեսական աճը. աճող էկոնոմիկա, ստատիկ էկոնոմիկա, նվազող գործարար ակտիվությամբ էկոնոմիկա:

Ապրանքների և ծառայությունների պետական գնումներ՝ բացառությամբ տրանսֆերտային վճարումների:

Չուտ արտահանում՝ արտահանվող և ներմուծվող ապրանքների և ծառայությունների ծավալների տարբերությունը:

ՀԱԱ-ի հաշվարկն ըստ եկամուտների և նրա տարրերը. ամորտիզացիա (տարեկան մասհանումները, որոնք ցույց են տալիս արտադրության պրոցեսում տարբեր տարիների սպառված կապիտալի ծավալը), անուղղակի հարկեր բիզնեսից (իրացումից գանձվող հարկ, ակցիզներ, ունեցվածքի հարկ, լիցենզիոն հարկեր և մաքսատուրքեր), աշխատավարձ, ռենտային վճարներ, տոկոս, շահույթ և եկամուտներ սեփականությունից: Ամորտիզացիայի և բիզնեսից գանձվող հարկերի առանձնահատկությունները:

Ազգային հաշիվների այլ ցուցանիշները. զուտ ազգային արդյունքը (ԶԱԱ) որպես ՀԱԱ-ի և ամորտիզացիայի տարբերություն, ազգային եկամուտը՝ (ԱԵ) և նրա հաշվարկման երկու եղանակները. ա) որպես ԶԱԱ-ի և բիզնեսից գանձվող անուղղակի հարկերի տարբերություն, բ) որպես տնտեսական ռեսուրսներից ստացված եկամուտների գումար, անձնական եկամուտ (ազգային եկամուտ՝ աշխատած եկամուտ – սոցիալական ապահովագրության վճարներ – կորպորացիաների շահութահարկը – կորպորացիաների չբաշխված շահույթը + տրանսֆերտային վճարումներ) և հարկերի վճարումից հետո մնացած կամ տնօրինվող անձնական եկամուտ(անձնական եկամուտ - անհատական հարկեր՝ եկամտահարկ, անձնական ունեցվածքի հարկ, ժառանգության հարկ):

Գների մակարդակի որոշումը: Գների ինդեքսի որոշումը. «շուկայական զամբյուղի» ամբողջական զնի և բազային ժամանականիջոցում նույն կամ նմանատիպ ապրանքների և ծառայությունների ամբողջական զնի հարաբերությունը: Ինֆլյացիա և դեֆլյացիա: Անվանական և իրական ՀԱԱ. *անվանական ՀԱԱ-ը* տվյալ տարվա արտադրության ծավալի արժեքն է, արտահայտած նույն տարվա գներով կամ տարադրամի փոփոխական կուրսով, *իրական ՀԱԱ-ն* արտադրության ծավալի արժեքն է՝ արտահայտված բազային կամ անփոփոխ գներով, կամ տարադրամի անփոփոխ կուրսով: Ինֆլյավորում և դեֆլյավորում.

Իրական ՀԱԱ-ը անվանական ՀԱԱ-ն է՝ հաշվի առած ինֆլյացիան կամ դեֆլյացիան: Այդ ճշգրտումներն անվանում են ինֆլյավորում կամ դեֆլյավորում: Տվյալ տարվա անվանական ՀԱԱ-ի դեֆլյավորման կամ ինֆլյավորման առավել պարզ և ուղղակի մեթոդն է անվանական ՀԱԱ-ի և գների ինդեքսի հարաբերությունը (հարյուրերորդական միավորներով): Իրական ՀԱԱ-ի հաշվարկման բանաձևը.

$$\text{իրական ՀԱԱ} = \frac{\text{Անվանական ՀԱԱ}}{\text{Գների ինդեքս (հարյուրերորդական միավորներով)}}$$

ՀԱԱ-ը և հասարակական բարեկեցությունը: ՀԱԱ-ի ցուցանիշի թերությունները՝ կապված ոչ շուկայական գործարքների, ազատ ժամանակի, արտադրանքի որակական բնութագրիչների բարելավման, թողարկվող արտադրանքի կազմի և բաշխման, մեկ շնչի հաշվով արտադրանքի թողարկման, շրջակա միջավայրի, ստվերային տնտեսության և այլ երևույթների հաշվառման հետ:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՍԱԿԱՐԴԱԿԸ

Տնտեսական անկայունությունը և գործազրկությունը: Գործազրկության ձևերը. ֆրիկցիոն, որը պայմանավորված է աշխատանքի ու աշխատատեղերի ընտրության ազատությամբ, կառուցվածքային, որը բացատրվում է սպառողական պահանջարկի ու տեխնոլոգիաների փոփոխությամբ և ցիկլային, որն առաջանում է տնտեսական անկում-

ների ժամանակ և բնութագրվում ամբողջական ծախսերի անբավարարությամբ ու պահանջարկի կրճատմամբ: Ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկության տարբերությունները: <<Լրիվ զբաղվածություն>> և <<գործազրկության բնական մակարդակ>>: Գործազրկության մակարդակի որոշումը որպես գործազուրկների թվի և ամբողջ աշխատուժի տոկոսային հարաբերություն: Վերջինիս բերությունները. մասնակի զբաղվածություն, <<ակտիվ աշխատանք չփնտրողներ>>, կերծ տեղեկատվություն: Գործազրկության բնական մակարդակի աճի միտումը: Աշխատավարձի նվազագույն մակարդակի և գործազրկության փոխազդեցությունը: Արհմիությունները և աշխատավարձի մակարդակը: Գործազրկության տնտեսական ծախսերը: Գործազրկության փաստացի մակարդակի գերազանցումը բնական նորմային: Արթուր Օուկենի օրենքը, ըստ որի եթե գործազրկության փաստացի մակարդակը գերազանցում է բնական մակարդակը 1 տոկոսի չափով, ապա ՀԱԱ-ը ետ է ընկնում 2,5 տոկոսով: Գործազրկության ոչ տնտեսական կամ սոցիալական ծախսերը. աշխատողների որակավորման կորուստ, ընտանիքների քայքայում, հասարակական և քաղաքական անկարգություններ, թմրադեղերի օգտագործման մարմնավաճառության աճ, հոգեկան խանգարումներ և այլն:

ԻՆՖԼՅԱՑԻԱ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՔԵՐԸ

Ինֆլյացիայի եությունը. փողի գնողունակության անկում՝ կապված գների աճի հետ: Ինֆլյացիայի մակարդակը դրամական զանգվածի և ապրանքային զանգվածի ծավալների աճի հարաբերություն է (տոկոսներով): Ինֆլյացիայի պատճառները. ա) պահանջարկի ինֆլյացիա, բ)արտադրության ծախսերի աճով կամ ամբողջական առաջարկի կրճատմամբ պայմանավորված ինֆլյացիա: Անվանական և իրական եկամուտներ: Անվանական եկամուտը որպես փողի քանակություն, որը մարդիկ ստանում են աշխատավարձի, ռենտայի, տոկոսի կամ շահույթի տեսքով: *Իրական եկամուտը* որպես ապրանքների և ծառայությունների քանակություն, որը կարելի է ձեռք բերել տվյալ անվանական եկամուտով: Ինֆլյացիայից տուժող խավեր.ֆիքսված անվանական

եկամուտ ստացողներ, խնայողություններ ունեցողներ և կրեդիտորներ: Կանխատեսվող ինֆլյացիա: Ինֆլյացիայի ազդեցությունն ազգային արդյունքի ծավալի վրա: Ինֆլյացիայի տեսակներն ըստ տեմպերի. նորմալ կամ սողացող, քառարշավ կամ սլացող ինֆլյացիա և հիպերինֆլյացիա: Օլբան Ֆիլիպսի կորը. կարճաժամկետ հատվածում ինֆլյացիայի և գործազրկության հակադարձ կապը:

ՓՈՂԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԸ: ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փողի էությունը և ֆունկցիաները. արժեքի չափ, շրջանառության միջոց, խնայողության կամ կուտակման միջոց: Փողի տեսակները. ապրանքային, թղթադրամային և բանկային: Փողի առաջարկը. M1 (կանխիկ մետաղադրամները և թղթադրամը, չեկային ավանդները), M2 (M1+ոչ չեկային խնայդրամարկղային և ժամկետային փոքր ավանդներ), M3 (M1+M2 + ժամկետային խոշոր ավանդներ): Վարկային քարտեր:

Փողի պահանջարկը. գործարքների համար պահանջվող փող, ակտիվների ձևով պահանջվող փող: Դրամական շուկան: Ակտիվների ձևով պահվող փողի քանակի և բանկի տոկոսադրույքի հակադարձ համեմատական կախվածությունը: Հավասարակշռությունը դրամական շուկայում: Շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակը որպես ՀԱԱ-ի և փողի շրջապտույտի արագության հարաբերություն: Փողի գնողունակությունը կամ իրական արժեքը:

Բանկերի ծագումը և դերը: Բանկային համակարգը. կենտրոնական, առևտրային, խնայողական: Կենտրոնական բանկի ֆունկցիաները (էմիսիոն, առևտրային բանկերի համար դրամարկղային ռեզերվների հավաքագրում և պահպանում, վարկերի տրամադրում և գործառնությունների իրականացում պետական օրգանների համար, բյուջեի միջոցների հավաքագրում և ծախսում, արժեթղթերի գործառնություններ, փոխառությունների թողարկում): Առևտրային բանկերի ֆունկցիա-

ները. դեպոզիտների հավաքագրում և չեկերի վճարում, հաշվարկների իրականացում, վարկերի տրամադրում:

Բանկային գործառնությունները.պասիվ (միջոցների հավաքագրում), ակտիվ (վարկային, գործառնություններ արժեթղթերի հետ), բանկային ծառայություններ (լիզինգային և տրաստային գործառնություններ և այլն): Վարկավորման սկզբունքները. վերադարձնելիություն, ժամկետայնություն, նպատակայնություն, ապահովվածություն, վճարելիություն:

Դրամավարկային քաղաքականության էությունը և լծակները. գործառնություններ բաց շուկայում, ռեզերվային նորմայի և զեղչատոկոսի փոփոխություն: <<էժան փողերի>> և <<թանկ փողերի>> քաղաքականությունը:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Պետական բյուջեն և նրա կառուցվածքը. եկամուտներ և ծախսեր: Եկամտի հոդվածները. հարկային եկամուտներ և տուրքեր(ուղղակի և անուղղակի հարկեր, հաստատգրված վճարներ և պետական տուրք) , ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալի գործառնություններից, մուտքեր պաշտոնական տրանսֆերտներից: Ծախսային հոդվածները. ընդհանուր բնույթի պետական ծառայություններ, պաշտպանություն, հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, կրթություն և գիտություն,առողջապահություն, սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն:

Բյուջետային դեֆիցիտ. ծախսերի գերազանցում եկամուտների նկատմամբ. առաջացման պատճառները. արտադրության անարդյունավետություն, կառավարման ապարատի ուռճացում, ռազմական ծախսերի աճ, անավարտ շինարարության նորմատիվի բարձրացում, սխալ հարկային քաղաքականություն: Բյուջետային պրոֆիցիտ. եկամուտների գերազանցում ծախսերի նկատմամբ:Բյուջեի կարգավորման կոնցեպտուալ մոտեցումները. ամենամյա կարգավորվող բյուջե (տարեկան հավասարակշռված բյուջե), ցիկլային հիմքի վրա հավասարակշռված բյուջե, ֆունկցիոնալ ֆինանսավորման ապահովում: Ա. Լաֆֆերի կորը:

Պետական պարտքի էությունը և տեսակները. ներքին և արտաքին: Պետական պարտքի պատճառները. պատերազմներ, տնտեսական անկումներ, հարկային ոչ ճիշտ քաղաքականություն: Պետության սնանկացման անհնարինության փաստարկները. վերաֆինանսավորում (նոր փոխառությունների վաճառք), հարկավորում, նոր թղթադրամի թողարկում: Պետական պարտքի հետևանքները. եկամուտների վերաբաշխում, տնտեսական և քաղաքական անկախության կորուստ, պարտքի դիմաց վճարվող տոկոսների աճ և արտադրության զարգացման դանդաղում, հարկերի աճ, ինֆլյացիա, արտանդման և ներմուծման էֆեկտներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Միջազգային առևտրի դերը և տնտեսական հիմքը.ա)տնտեսական ռեսուրսները՝(բնական, մարդկային, ինվեստիցիոն) և ապրանքները բաշխված են տարբեր երկրների միջև շատ անհավասարաչափ, բ) տարբեր ապրանքների արդյունավետ արտադրությունը պահանջում է տարբեր տեխնոլոգիաներ կամ ռեսուրսների համադրումներ: Մասնագիտացումը և հարաբերական առավելությունների տեսությունը: Արտաքին առևտրում վարվող քաղաքականության ձևերը.ազատ առևտուր և հովանավորում:

Առևտրական արգելքները հովանավորման քաղաքականության դեպքում. մաքսեր, ներմուծման քվոտներ, ոչ տարիֆային խոչընդոտներ, արտահանության կամավոր սահմանափակումներ: Մաքսերի սահմանման տնտեսական հետևանքները: Փաստարկներ հովանավորման քաղաքականության օգտին. երկրի անվտանգությունն ապահովող ստրատեգիական ճյուղերի զարգացում, ներքին զբաղվածության աճ, նոր զարգացող ճյուղերի հովանավորում, պաշտպանություն դեմպինգի քաղաքականությունից, պաշտպանություն էժան արտասահմանյան աշխատուժի մրցակցությունից:

Վճարման հաշվեկշիռ. դեֆիցիտներ և ակտիվներ: Տարադրամային կուրսեր. ազատ կամ լողացող, կայուն և լողացող կարգավորվող: Ազատ տարադրամային կուրսը որոշող գործոնները. սպառողների ճա-

շակների փոփոխություն, հարաբերական փոփոխություններ եկամուտներում, գների հարաբերական փոփոխություն, իրական տոկոսադրույքներ, սպեկուլյացիա: Կայուն տարադրամային կուրսի լծակները. ռեզերվների օգտագործում, առևտրական քաղաքականություն, տարադրամային վերահսկողություն՝ ռացիոնավորում, ներքին մակրոտնտեսական կարգավորում: Ոսկու ստանդարտ. ֆիքսված տարադրամային կուրսի պայմանները. ա) երկրի դրամական միավորի համար սահմանվում է ոսկու որոշակի բովանդակություն, բ) պահպանվում է խիստ հարաբերակցություն երկրի ոսկու պաշարների և փողի ներքին առաջարկի միջև, գ) չի խոչընդոտում ոսկու ազատ արտահանմանն ու ներմուծմանը: Ոսկու ստանդարտի առավելությունները (նպաստում է անորուշության և ռիսկի նվազմանը և խթանում միջազգային առևտրի ծավալների աճը, ինքնաբերաբար հավասարեցնում վճարման հաշվեկշռի դեֆիցիտներն ու ակտիվները) և թերությունները (հարմարվողականություն, կարող է գործել քանի դեռ մասնակիցներից մեկը չի սպառել իր ոսկու պաշարները): Ոսկու ստանդարտի համակարգի կազմալուծումը: Տարադրամի կարգավորման Բրետտոն-Վուդյան համակարգը: Միջազգային տարադրամային ֆոնդի ստեղծումը:

Ժ Ա Մ Ա Ց Ա Ն Ց

ԹԵՄԱՆԵՐ	հեռակա ուսուցում	
	դասախոս.	գործնական
1.Տնտեսագիտության առարկան և մեթոդը	2	-
2.Տնտեսագիտության հիմքը: Հասարակության արտադրական հնարավորությունների սահմանը:	2	-
3. Շուկա: Պահանջարկ և առաջարկ	2	2
4.Մակրոտնտեսական ցուցանիշներ	2	2
5.Գործազրկության բնական մակարդակը	2	-
6.Ինֆլյացիա. պատճառները և ծախսերը	2	-
7.Փողը և բանկային գործը: Դրամավարկային քաղաքականություն	2	2
8.Պետական բյուջե: Պետական պարտք	2	-
9.Միջազգային առևտուր	2	-
ԸՆԴՀԱՄԵՆՆԸ	18	6

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ի աեբի րի օեե Է. Ի ., Ածթ Ն.Է., Կեի րի րի եեհ, Ի ., 1999.
2. Ոնի օյեւնի ր Ի ., Կեի րի րի եեա, Ի ծի օծօհն, 1964.
3. Ածօաի ծե Ի րի եթ, Ի ծեի օեի ւ րի րի րի եեհ, Ն. Ի օծօօօօօօ, 1999.
4. Օօեի օ Ի ., Կեի րի րի ե-օհեեե ր օծօ յ ւ օեօի եյ, Ի ., 1992.
5. Օեօօծ Ն., Արծի օօօ , Օի օեօի շե Ի ., Կեի րի րի եեա, Ի ., 1999.
6. Պոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Ղ. Նորդհաուս, Տնտեսագիտություն, 1-ին հատոր, մակրոտնտեսագիտություն, Հայաստանի ամերիկյան համալսարան, Ե., 1995
7. Գրեգորի Ն. Մեմբրու, Մակրոէկոնոմիկա, Ե., 1997
8. Էօծն րի րի րի եեե (րի օ ծօօօօօօօօ Բ.Ա. Ծօեչօօօօօ) , Ի ., 2000.
9. Աօեեի օօ Ա.Շ., Ի օւօյ րի րի րի ե-օհեօյ Օօի ծեյ, Ի ., 1999.
10. Կեի րի րի եեա (րի օ ծօօօօօօօօ Բ.Ն.Աօեօօի օօ) , Ի ., 2000.
11. Տնտեսագիտություն (Ռ.Ն.Սարինյանի ընդհանուր խմբագրությամբ), Ե., 2005թ.

ՈՒՖԵՐԱՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿԱ

<< ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ >>

1. Ինվեստիցիաների դերը տնտեսական աճի ապահովման գործում:
2. Բաժնետիրական ընկերությունների ձևավորման եղանակները:
3. Ալցիայի կուրսը և դրա վրա ազդող գործոնները:
4. Մոնոպոլիա և օլիգոպոլիա:
5. Փոքր և միջին բիզնեսի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում:
6. Հարկաբյուջետային քաղաքականությունը ՀՀ-ում արդի ետապում:
7. Դրամավարկային քաղաքականություն:
8. Ստվերային տնտեսության կրճատման ուղիները ՀՀ-ում:
9. Աղքատությունը և սոցիալական աջակցության քաղաքականությունը:
10. Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման հիմ-նախնդիր-ները ՀՀ -ում:
11. Կենտրոնական բանկի դերը ֆինանսական համակարգում:
12. Արժեթղթերի շուկան ՀՀ -ում:
13. Կենսամակարդակի գնահատման գործոնները:
14. Բյուջեի դեֆիցիտը և կարգավորման ուղիները:
15. Պետական պարտքը և դրա տնտեսական հետևանքները:
16. Արտահանման կռուցվածքը ՀՀ -ում:
17. Օտարերկրյա ուղղակի ներդրումները և դրանց դինամիկան:
18. Արտաքին առևտրում վարվող քաղաքականության ձևերը:
19. Հարկերի հիմնական տեսակները ՀՀ -ում:
20. Պետության հակամենաշնորհային քաղաքականությունը:
21. Վարկի ձևերն ու սկզբունքները:
22. ՀՀ տնտեսական ինտեգրացիան արդի փուլում:
23. ՀՀ բնակչության արտահոսքի պատճառներն ու հետևանքները:
24. Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը:
25. Զարգացող երկրների տեղը համաշխարհային տնտեսության մեջ:
26. ՀՀ արդի դեմոգրաֆիական վիճակը:
27. Աշխատանքային շուկայի հիմնահարցերը ՀՀ-ում:
28. Ազգային տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշները:
29. Ինֆլյացիայի պատճառներն ու տնտեսական հետևանքները:
30. Տարադրամի կուրսի տատանումն ու դրա կարգավորման ձևերը:
31. Համաշխարհային տնտեսության գլոբալացման հիմնախնդիրները:

32. Տնտեսական աճի հիմնախնդիրները:
33. ՀՀ տեղական բյուջեների համակարգը:
34. Հարկերը և տուրքերը՝ որպես հանրապետության բյուջեի եկամուտների ձևավորման աղբյուր:
35. Աշխատանքի բաժանումը՝ որպես միջազգային տնտեսական հարաբերությունների հիմք:
36. Միջազգային առևտրի ոլորտները:
37. Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ծախսերի պլանավորումը:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Տեսուեր

1. Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը.

ա) տնտեսագիտությունը գիտություն է բիզնեսի և գովազդային գործի մասին,

բ) տնտեսագիտությունը գիտություն է մարքեթինգի, ձեռնարկությունների ու միավորումների ֆինանսավորման ու կառավարման մասին,

գ) տնտեսագիտությունն ուսումնասիրում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման ու կառավարման խնդիրները մարդկանց անսահմանփակ պահանջմունքների առավելագույն բավարարման նպատակով,

դ) տնտեսագիտությունը գիտություն է օրենքների մասին, որոնց օգնությամբ կանխատեսվում են մարդկանց գործողություններն ու դրանց հետևանքները:

2. Ինդուկցիայի մեթոդը նշանակում է անցում.

ա) փաստերից դեպի մասնավորը,

բ) տեսությունից դեպի փաստեր,

գ) ընդհանուրից դեպի մասնավորը,

դ) մասնավորից դեպի ընդհանուրը:

3. Բերված արտահայտություններից որի՞ դեպքում է օգտագործված վերացարկման (աբստրակցիայի) մեթոդը.

ա) տնտեսությունը գործում է ռեսուրսների լրիվ զբաղվածության պայմաններում,

բ) զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում պետության տնտեսական միջամտությունը բացակայում է,

գ) աշխատանքի արտադրողականության աճն ուղիղ համեմատականորեն կախված է տեխնոլոգիայի կատարելագործումից,

դ) եկանուտները վերաբաշխելու նպատակով պետությունը կիրառում է տրանսֆերտային վճարներ,

ե) այլ հավասար պայմաններում ապրանքի գնի և պահանջարկի մեծության միջև գործում է հակադարձ համեմատական կախվածություն:

4. Հետևյալ պնդումներից որո՞նք են պոզիտիվ.

ա) գների աճի հետևանքով իջել է ազգաբնակչության կենսամակարդակը,

բ) “Փարոս” ծրագրում ընդգրկված են 40 հազար ընտանիքներ,

գ) ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակն աճել է 10 %-ով,

դ) դրամական ռեֆորմի հետևանքով արժեզրկվել են բնակչության խնայողությունները, և կառավարությունը պետք է ինդեքսավորի ու փոխհատուցի կորուստները,

ե) “Նաիրիտ” ՓԲԸ-ը տարեկան թողարկում է 100 տոննա սինթետիկ կաուչուկ,

զ) ցանկալի է իջեցնել էլեկտրաէներգիայի վարձաչափը:

5. Ներքոհիշյալ տնտեսական նպատակներից որո՞նք են փոխադարձաբար լրացնում միմյանց.

ա) լրիվ զբաղվածություն և գների կայուն մակարդակ,

բ) տնտեսական աճ և եկամուտների արդարացի բաշխում,

գ) լրիվ զբաղվածություն և տնտեսական անպահովվածության կրճատում,

դ) տնտեսական աճ և արտադրության արդյունավետության բարձրացում,

ե) տնտեսական ապահովվածության և աշխատանքի արտադրողականության աճ,

զ) շրջակա միջավայրի աղտոտվածության վերացում և ազատ ժամանակի ավելացում:

6. Գրաֆիկորեն ներկայացնել եկամուտների և սպառման միջև գործող փոխազդեցությունը:

7. Կառուցել երկու մեծությունների՝ ուսման վարձի և ուսանողների թվի կախվածության գրաֆիկը:

8.Որո՞նք են տնտեսագիտության հիմքը կազմող հիմնարար փաստերը.

ա) շուկայական պահանջարկն ու առաջարկը,

բ) ազատ մրցակցությունն ու գները,

գ) անսահման պահանջմունքներն ու սահմանափակ տնտեսական ռեսուրսները,

դ) մասնավոր սեփականությունն ու տնտեսական ազատությունը:

9.Ինչո՞վ կարելի է հիմնավորել լրացուցիչ ծախսերի աճի օրենքը.

ա) տնտեսական ռեսուրսների ոչ բացարձակ ճկունությամբ,

բ) ռեսուրսների անսահմանափակությամբ,

գ) տեղափոխման ընթացքում ընտրության հնարավորության կրճատմամբ:

10.Ինչպե՞ս կտեղաշարժվի արտադրական հնարավորությունների կորը, եթե կատրելագործվել է հաստոցների արտադրության տեխնոլոգիան, իսկ սառնարաններինը մնացել է նույնը: Գծել նոր կորը:

11.Ի՞նչ պետք է տեղի ունենա, որպեսզի տնտեսությունը հասնի կորից դուրս գտնվող K կետի արտադրության մակարդակին.

- ա) ռեսուրսների քանակական աճ,
- բ) ռեսուրսների որակական բարելավում,
- գ) թղթադրամի էմիսիա,
- դ) հարկերի բարձրացում,
- ե) տեխնոլոգիայի կատարելագործում:

12. Ի՞նչ է ցույց տալիս կորի ներսում գտնվող N կետը.

- ա) արտադրության առավելագույն արդյունավետություն,
- բ) ռեսուրսների ոչ լրիվ զբաղվածություն,
- գ) արտադրության ոչ լրիվ ծավալ,

13. 1988թ. երկրաշարժն ինչպե՞ս ազդեց Հայաստանի տնտեսության արտադրական հնարավորությունների կորի վրա.

- ա) կորը տեղաշարժեց աջ,
- բ) կորը տեղաշարժեց ձախ,
- գ) կետը տեղաշարժեց կորի երկայնքով,
- դ) կետը տեղաշարժեց կորից դուրս,
- ե) կետը տեղաշարժեց կորից ներս:

14. Ինչպե՞ս է տեղաշարժվում արտադրական հնարավորությունների կորը տրանսպորտային ուղիների շրջափակման դեպքում.

- ա) մնում է անփոփոխ,
- բ) տեղաշարժվում է դեպի ձախ,
- գ) տեղաշարժվում է դեպի աջ,
- դ) տեղաշարժվում է և աջ, և ձախ:

15. Ինչի՞ վրա է ազդում պահանջարկի ոչ գնային դետերմինանտներից յուրաքանչյուրի փոփոխությունը.

- ա) պահանջարկի,
- բ) պահանջարկի մեծության:

16. Ո՞ր հասկացությունն է ավելի լայն արտաքին առևտրի բացակայության պայմաններում.

- ա) առաջարկը,
- բ) արտադրության ծավալը,
- գ) առաջարկի մեծությունը:

17. Ի՞նչ է կատարվում առաջարկի կորի հետ, երբ փոխվում է առաջարկի ոչ գնային դետերմինանտներից որևէ մեկը.

- ա) տեղաշարժ կորի մի կետից մյուսին,
- բ) կորի տեղաշարժ դեպի ձախ,
- գ) կորի տեղաշարժ դեպի աջ:

18. Ինչպե՞ս կփոխվեն ապրանքների հավասարակշռված գինն ու պահանջարկը, եթե ապագայում սպասվում է ապրանքային պակասորդ.

- ա) պահանջարկը կաճի, գները կնվազեն,
- բ) պահանջարկը և գները կաճեն,

գ) պահանջարկը կմնա անփոփոխ:

19. Ինչպե՞ս կփոխվեն ավտոմեքենաների հավասարակշռված գինն ու պահանջարկը բենզինի թանկացման դեպքում.

ա) գինը կբարձրանա, պահանջարկը կնվազի,

բ) գինն ու պահանջարկը միաժամանակ կաճեն,

գ) գինը կիջնի, պահանջարկը կնվազի:

20. Ո՞ր կողմ կտեղաշարժի պահանջարկի կորը եկամուտների աճի դեպքում.

ա) դեպի աջ,

բ) դեպի ձախ,

գ) կորի դիրքը չի փոխվի,

դ) կորը կտեղաշարժվի և՛ աջ, և՛ ձախ:

21. Անփոփոխ առաջարկի դեպքում զբոսաշրջիկների թվի կրճատումն ինչպե՞ս կազդի ապրանքների պահանջարկի և գնի վրա.

ա) պահանջարկը կաճի,

բ) գինը կնվազի,

գ) պահանջարկը կնվազի, գինը նույնպես,

դ) պահանջարկը կաճի, գինը կնվազի:

22. Ինչպե՞ս կփոփոխվեն հավասարակշռված գինն ու քանակը, եթե ապրանքի պահանջարկն աճի, իսկ առաջարկը նվազի.

ա) գինն ու քանակը միաժամանակ կաճեն,

բ) գինը կաճի, քանակը կնվազի,

գ) գինը կաճի, քանակը կմնա անփոփոխ,

դ) գինը կնվազի, քանակը կաճի:

23. Ինչպե՞ս կփոփոխվեն հավասարակշռված գինն ու քանակը, եթե ապրանքի պահանջարկն ու առաջարկը միաժամանակ աճեն.

ա) գինը կմնա անփոփոխ, քանակը կաճի,

բ) գինը կնվազի, քանակը կաճի,

գ) գինը կաճի, քանակը կնվազի,

դ) գինն ու քանակը միաժամանակ կաճեն:

24. Որո՞նք են ՀԱԱ-ի ծախսերի հիմնական տարրերը.

ա) տնային տնտեսությունների անձնական սպառողական ծախսեր,

բ) համախառն, մասնավոր, ներքին ինվեստիցիաներ,

գ) ամորտիզացիա,

դ) պետական գումուններ,

ե) աշխատավարձ,

զ) զուտ արտահանում:

25. Որո՞նք են ՀԱԱ - ի եկամուտների հիմնական տարրերը.

ա) ամորտիզացիա,

բ) ռենտա,

- գ) անուղղակի հարկեր բիզնեսից,
- դ) պետական գնումներ,

26. Եկամուտների ո՞ր տեսակն է հաշվարկվում տվյալ տարվա ՀԱԱ - ի մեջ.

- ա) գործարանի նախկին բանվորի թոշակը,
- բ) սեփական տունը վերանորոգող ներկարարի աշխատանքը ,
- գ) բժշկի եկամուտները,
- դ) բնակարանի վարձակալունից ստացված ռենտան,
- ե) պետական փոխառություններից ստացված եկամուտները,
- զ) միավորման ապրանքային պաշարների աճը,
- է) ձեռնարկատիրոջ ստացած շահույթը:

27. Ըստ Արթուր Օուկենի օրենքի որքա՞ն է ՀԱԱ-ի կորուստը աշխատանքային ռեսուրսների 10 % գործազրկության դեպքում.

- ա) 25%,
- բ) 10%,
- գ) 90%:

28. Ո՞ր դեպքում իրական եկամուտների աճը կգերազանցի անվանական եկամտին.

- ա) անվանական եկամուտն ու գներն աճել են հավասարաչափ,
- բ) անվանական եկամտի աճը գերազանցում է գների աճին,
- գ) անվանական եկամուտն աճել է, իսկ գներն իջել են:

29. Նշված ինֆլյացիաներից ո՞րը կարող է դրական ազդեցություն ունենալ ազգային արտադրության ծավալների վրա.

- ա) առաջարկի նորմալ ինֆլյացիան,
- բ) պահանջարկի նորմալ ինֆլյացիան,
- գ) սլացող ինֆլյացիան,

30. Որո՞նք են պետական պարտքի աճի բացասական հետևանքները.

- ա) եկամուտների վերաբաշխումը,
- բ) արտանդման էֆեկտը,
- գ) հարկերի բարձրացումը,
- դ) ներմուծման էֆեկտը,
- ե) թղթադրամի էմիսիան,
- զ) ինվեստիցիաների աճը,
- է) տնտեսական կախվածությունը,
- ը) գործազրկության կրճատումը:

31. Ի՞նչ գործոններով է պայմանավորված արտաքին առևտրի անհրաժեշտությունը.

- ա) ռեսուրսների անհավասարաչափ բաշխմամբ,
- բ) աֆտարկիայի քաղաքականությամբ,
- գ) աշխատանքի բաժանմամբ և մասնագիտացմամբ,

- դ) հարաբերական առավելությունների տեսությամբ,
- ե) բնակչության ճաշակով և նախասիրություններով:

32. Ինչպիսի՞ առևտրական արգելքներ են կիրառվում հովանավորման քաղաքականության դեպքում.

- ա) տարիֆներ,
- բ) քվոտներ,
- գ) զեղչեր,
- դ) ոչ առևտրական արգելքներ,
- ե) դրույքներ,
- զ) առևտրի կամավոր սահմանափակումներ:

Պատվեր՝ 310

Տպաքանակ՝ 200

*Տպագրված է Հայաստանի Պետական Ծարտարագիտական
Համալսարանի տպարանում*

Երևան, Տերյան 105